**ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեն (այսուհետ Կոմիտե) հայտարարում է Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 19/1-3.3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու մասին**

Հաշվառում և ամփոփում է գանձապետական հաշիվները և գանձապետական բաժանմունքների մուտքերի և փոխանցումների կատարումը, իրականացնում է դրամարկղային և բանկային գործարքները (գանձապահի պարտականություններ, դրամարկղի գրքի լրացում, վճարային հանձնարարագրերի լրացում), հաշվարկում և Բաժնի պետի հաստատմանն է ներկայացնում նպատակային-ծրագրային, հավելավճարների, ասպիրանտական կրթաթոշակների, թեմատիկ, հիմնարար և կարևորագույն հետազոտությունների մասով ամսեկան կտրվածքով ֆինանսավորման ենթակա գումարները: Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բյուջետային հիմնարկների ծախսերի նախահաշիվների կատարման, հաշվառման և ամփոփման աշխատանքներին:

Նշված պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու համար պահանջվում է՝

* «Տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ)» մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

* իր լիազորությունների հետ կապված Հայաստանի Հանրապետության աշխատանքային և հարկային օրենսգրքերի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Գնումների մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

* անհրաժեշտ տեղեկատվությանը տիրապետում.

* համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

* անհրաժեշտ տեղեկատվությանը տիրապետում:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Աշխատավարձի չափը կազմում է 129634 (մեկ հարյուր քսանինը հազար վեց հարյուր երեսունչորս) դրամ:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտե, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22:

Դիմող ՀՀ քաղաքացիները ԿԳՆ գիտության կոմիտե (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 703 սենյակ, հեռ. 21-01-40-107) պետք է ներկայացնեն հետևալ փաստաթղթերը՝

* գրավոր դիմում (ձևը կցվում է).

* կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի)՝ պատճենները.

* աշխատանքային գրքույկի պատճենը՝ բնօրինակի հետ միասին.

* արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք.

* մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

* անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:30-ից մինչև 12:30-ը՝ ներկայացնելով անձնագիրը (նույնականացման քարտը) կամ հետևյալ էլ. փոստով՝ hr@scs.am: